ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07.08.2017 12:30

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին» **07.08.2017թ. № 225-Լ որոշմամբ *2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09^{00}-ից մինչև 18^{00}*-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ ***Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող*** վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով ***(առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրվել է ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.***

- ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն.
- ՀՀ փաստաբանների պալատի ***կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում:***

1. Ընդհանուր ժողովի օրակարգային հարցերով **<u>քվեարկությունը</u>** սկսվում է **2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18^{00}-ին**:
2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **<u>թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)</u>** սկսվում է **2017 թվականի օգոստոսի 12-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի օգոստոսի 17-ին (ներառյալ)**:
3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **<u>թեկնածուների քարոզչությունը</u>** սկսվում է **2017 թվականի օգոստոսի 18-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 18^{00}-ին**:
4. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.08.2017թ. № 225-Լ որոշումը.

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին ծանուցումը.

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

22.12.2016ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2017ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })